ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ» (Կ-1069-12.05.2025-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվաի 1-ին մաս, 12-րդ հոդվածի 5-րդ մաս,	Նախագծերի փաթեթում, առավելապես «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ամբողջ տեքստում որոշ հասկացություններ կիրառվում են տարբեր կերպ եւ միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են տարբեր բառեր: Նախագծերի փաթեթում կիրառվում են «բնակչության պետական ռեգիստր», «ռեգիստր», «բնակչության ռեգիստր» հասկացությունները՝ համապատասխան հոլովաձեւերով: Առաջարկում ենք կիրառել միայն Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված «բնակչության պետական ռեգիստր» հասկացությունը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

2.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի վերնագիր, 1-ին մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք 15-րդ հոդվածը առաջարկվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «հասկացությունները» բառից առաջ լրացնել «հիմնական» բառը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում միեւնույն երեւույթի համար սահմանվում է կիրառելի երկու հասկացություն, մասնավորապես՝ «բնակչության պետական ռեգիստր» եւ «բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարան»: Նախագծի հետագա տեքստում կիրառվում են նշված 2 հասկացությունների տարբեր ձեւերը: Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանել բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանի հասկացությունը: Միաժամանակ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի համարակալումը վերանայել:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**
4.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետով սահմանված է «բնակչության պետական	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան	**Ընդունվել է:**

		հոդվածի 1-ին մասի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետ, 22-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ	ռեգիստրի տվյալների շտեմարանի կանոնակարգ (այսուհետ՝ կանոնակարգ)՝» հասկացությունը: Հարկ է նկատել, որ նշված հասկացությունը նախագծի տեքստում օգտագործվում է տարբեր ձևերով, բացի այդ մի շարք դրույթներում օգտագործվող «կանոնակարգ» բառը խնդրահարույց է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունի համատեքստում: Հաշվի առնելով վերագրյալը և Նախագծում հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետում «այսուհետ՝» բառից հետո լրացնել «տվյալների շտեմարանի» բառերը, միաժամանակ վերանայելով նշված հասկացության հետագա կիրառումը նախագծում:	փոփոխությունները:	
5.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ (լրամշակված 5-րդ) կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ (լրամշակված 5-րդ) կետի համաձայն՝ բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտը հանդիսանում են այն ֆիզիկական անձինք, որոնց վերաբերյալ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները ներառվում են	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			բնակչության պետական ռեգիստրում,իսկ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված են անձնական տվյալները: Նախագծում օգտագործվող հասկացությունների մ իատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ (լրամշակված 5-րդ) կետի «տեղեկությունները» բառը փոխարինել «տվյալները» բառով:		
6.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ (լրամշակված 7-րդ) կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ (լրամշակված 7-րդ) կետի համաձայն՝ «բնակչության պետական ռեգիստրում տվյալներ ներկայացնող մարմիններ՝ բնակչության պետական ռեգիստր տվյալներ ներկայացնող մարմիններն են այն պետական, տեղական ինքնակառավարման մարմինները կամ իրավաբանական անձինք, որոնք պարտավոր են սույն օրենքով սահմանված տեղեկությունները ներկայացնել բնակչության պետական ռեգիստր.» «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			հակասությունները: Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ (լրամշակված 7-րդ) կետի «բնակչության պետական ռեգիստր տվյալներ ներկայացնող մարմիններն են այն» բառերը հանել:		
7.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ (լրամշակված 9-րդ) և նոր լրացվող 10-րդ կետեր	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ (լրամշակված 9-րդ) կետով սահմանված է «տվյալների ներկայացում, թարմացում» հասկացությունը: Հարկ է նկատել, որ նշված հասկացությունները նախագծի տեքստում օգտագործվում են տարբեր բովանդակային ձևերով, ուստի առաջարկում ենք 1) Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ (լրամշակված 9-րդ) կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ « **տվյալների ներկայացում՝** բնակչության պետական ռեգիստրում տվյալներ ներկայացնող մարմինների կողմից բնակչության պետական ռեգիստրի սուբյեկտի վերաբերյալ անձնական, բնակության, իրավական կարգավիճակի, ազգության, իրավական վիճակը	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			բնութագրող գործողությունների կամ դեպքերի, այդ թվում՝ խնամակալության եւ հոգաբարձության վերաբերյալ տեղեկությունների մուտքագրում» 2) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «10) տվյալների թարմացում՝ բնակչության պետական ռեգիստրում տվյալներ ներկայացնող մարմինների կողմից բնակչության պետական ռեգիստրի սուբյեկտի վերաբերյալ անձնական, բնակության, իրավական կարգավիճակի, ազգության, իրավական վիճակը բնութագրող գործողությունների կամ դեպքերի, այդ թվում՝ խնամակալության եւ հոգաբարձության վերաբերյալ տեղեկությունների թարմացում:» Միաժամանակ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի համարակալումը վերանայել:		
8.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ (լրամշակված 12-րդ) կետ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով իրենց վերապահված գործառույթների իրականացման համար բնակչության պետական ռեգիստրում առկա	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելը նախատեսվում է իրականացնել անվճար իսկ Ֆիզիկական և իրավաբանական անձանց մասով՝ վճարովի հիմունքներով, առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ (լրամշակված 12-րդ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «12) տեղեկություններին հասանելիություն՝ բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկությունը պահանջող անձի հարցմանը պատշաճ կարգով պատասխանելը կամ թվային անվտանգ միջավայրում ծառայություններ մատուցելը, ինչպես նաեւ իրավաբանական անձանց վճարովի հիմունքներով, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ անվճար, օրենքով իրենց վերապահված գործառույթների իրականացման համար բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելը.»		
9.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի	Նախագծի ողջ տեքստում օգտագործվում են, և՛ «միգրացիայի եւ քաղաքացիության	**Ընդունվել է:** Կատարվել են	**Ընդունվել է:**

		Նախագծի 3-րդ հոդվածի 5-րդ մաս, 13-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ, 6-րդ մասեր, 13-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետ, 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ, 15-րդ հոդվածի 4-րդ մաս, 21-րդ հոդվածի վերնագիր, 1-ին, 2-րդ, 3-րդ մասեր, 4-րդ գլխի վերնագիր, 22-րդ հոդվածի վերնագիր, 1-ին, 2-րդ, 4-րդ մասեր, 2-րդ մասի 10-րդ կետ, 24-րդ հոդվածի 1-ին մաս,25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	ոլորտի կառավարության լիազորած պետական կառավարման մարմին», և՛ «միգրացիայի եւ քաղաքացիության ոլորտի պետական լիազոր մարմին» հասկացությունները: Եզրութաբանական միատեսակ կիրառությունն ապահովելու, ինչպես նաև համապատասխան ոլորտի անվանումը ճիշտ հիշատակելու նպատակով առաջարկվում է վերանայել միգրացիայի եւ քաղաքացիության բնագավառի պետական լիազոր մարմնի վերաբերյալ հիշատակումները:	համապատասխան փոփոխությունները:	
10.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ (լրամշակման արդյունքում հանված) կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բնակչության պետական ռեգիստրի տվյալների կազմի մեջ ներառված է նաև բնակության վերաբերյալ տեղեկությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն բնակչության պետական ռեգիստրը տվյալների փոխանակման շերտի միջոցով կապված է նաեւ այլ տվյալների շտեմարանների հետ, որի միջոցով տվյալ	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			շտեմարաններից ստանում է լրացուցիչ տեղեկություններ բնակչության հաշվառման վերաբերյալ և այլնի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ բնակչության հաշվառման վերաբերյալ տեղեկությունը նախագծի իմաստով նույնանում է բնակության վերաբերյալ տեղեկությունների հետ, իսկ բնակության վերաբերյալ տեղեկությունը նախատեսված է բնակչության պետական ռեգիստրի տվյալների կազմում առաջարկվում է 7-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը հանել:		
11.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մաս (լրամշակման արդյունքում հանված)	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնակչության պետական ռեգիստր տվյալներ ներկայացնող մարմինները պարտավոր են ապահովել իրենց կողմից ներկայացվող տեղեկությունների ճշգրտությունն ու արդիականությունը, իսկ 7-րդ հոդվածի 3-րդ մասը կրկնում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասը հանել:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

12.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 1-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ (լրամշակման արդյունքում լրացված) կետ	Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն. «Բնակչության պետական ռեգիստրում մուտքագրվում են բնակչության պետական ռեգիստրի սուբյեկտի վերաբերյալ իրավական վիճակը բնութագրող գործողությունների կամ դեպքերի վերաբերյալ հետեւալ տվյալները՝ (...) 9) դիտավորությամբ կատարված ծանր եւ առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված լինելու եւ պատիժը կրելու վերաբերյալ տեղեկատվություն:»: Հարկ է նկատել, որ Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը բնակչության պետական ռեգստր է մուտքագրում ոչ միայն դիտավորությամբ կատարված ծանր եւ առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված եւ պատիժը կրող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը, այլ նաեւ նշված անձանց՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի կրումը	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			ավարտելու վերաբերյալ տեղեկատվությունը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք բնակչության պետական ռեգիստր մուտքագրվող տվյալներին վերաբերող դրույթներում տվյալների շրջանակը նույնացնել, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսեւորել համապատասխան վարքագիծ: Ըստ այդմ առաջարկվում է նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «10) դիտավորությամբ կատարված ծանր եւ առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված եւ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի կրումը ավարտելու վերաբերյալ տեղեկատվություն:»:		
13.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ միգրացիայի եւ քաղաքացիության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնը «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			պահանջների պահպանման նկատմամբ իրականացնում է մոնիթորինգ եւ իրավասու մարմինների կողմից բնակչության պետական ռեգիստր պարտադիր մուտքագրման ենթակա տվյալների չմուտքագրման կամ թերի կամ սխալ մուտքագրման դեպքերը հայտնաբերելու դեպքում իրավասու մարմիններին տվյալները մուտքագրելու մասով պարտադիր կատարման ենթակա ուղղորդումներ է ներկայացնում: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախարարությանը ենթակա մարմինը գործում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում և ապահովում է նախարարության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտի առանձին ուղղությունների իրականացումը, իսկ «Կառավարության կառուցվածքի եվ գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախարարը ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և		

			իրականացնում է Կառավարության՝ նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի քաղաքականությունը: Այս համատեքստում կարծում ենք, որ արդարացված չէ նախարարությանը ենթակա մարմնի կողմից նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներից դուրս գործող կամ նախարարության իրավասության շրջանակներից դուրս համապատասխան գործունեության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող կամ դրա ենթակա մարմնին, ինչպես նաև նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում գործող այլ պետական մարմնին կամ դրա ենթակա մարմնին միգրացիայի եւ քաղաքացիության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից պարտադիր կատարման ենթակա ուղղորդումների ներկայացումը: Հաշվի առնելով վորոգրյալը առաջարկվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի		

			«պարտադիր կատարման ենթակա» բառերը հանել:		
14.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ (լրամշակված 9-րդ) կետ	Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետին հաջորդում է 10-րդ կետ, ուստի առաջարկում ենք ապահովել Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կետերի համարակալման հաջորդականությունը: Բացի այդ Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին հաջորդում միեւնույն 10-րդ կետը, ուստի առաջարկում ենք ուղղել վրիպակը՝ բացառելով անհիմն կրկնությունը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
15.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին չհամարակալված պարբերություն (լրամշակված 22-րդ հոդվածի 3-րդ մաս)	Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին չհամարակալված պարբերությունն առաջարկում ենք համարակալել՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթի պահանջները: Միաժամանակ, առաջարկվում է վերանայել 22-րդ հոդվածի համարակալումը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**
16.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ	**Ընդունվել է:** Կատարվել են	**Ընդունվել է:**

		նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասեր	մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մուտքի հարթակում բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտը մուտքագրում է իր հիմնական եւ ոչ հիմնական հասցեները, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ (…) Սույն կետում նշված դեպքում տեղեկություններին հասանելիությունն ապահովվում է տեղեկատվական մուտքի հարթակի միջոցով կառավարության սահմանած կարգով: Եզրութաբանական միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասի «հարթակում» բառից առաջ լրացնել «տեղեկատվական» բառը: Նույն դիտարկումը վերաբերում է նաև 23-րդ հոդվածի 6-րդ մասին:	համապատասխան փոփոխությունները:	
17.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 7-րդ մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ: Ըստ այդմ առաջարկվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 7-րդ մասի «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:		
18.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 8-րդ գլխի վերագիր, 26-րդ հոդվածի վերնագիր, և 1-ին մաս	Նախագծի 26-րդ հոդվածում որպես անցումային դրույթ սահմանված է. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանի գործարկմանը հաջորդող օրվանից, բայց ոչ ուշ, քան 2027 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Բնակչության պետական ռեգիստրի տվյալների շտեմարանը գործարկվում է մինչեւ 2027 թվականի հունվարի 1-ը:»: Վերոնշյալ դրույթի վերաբերյալ նշենք հետեւյալը. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			1) նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները. 2) գործողության ժամկետները, երբ նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ): Այս դեպքում նշվում է ակտի կամ դրա առանձին մասի գործողության հստակ ժամկետը:»: Այսպես՝ Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սահմանվում է Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը, ուստի այն համարվում է եզրափակիչ մաս: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է վերանայել Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը, ինչպես նաեւ հոդվածի եւ գլխի վերնագրերը:		
19.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող է ընդունվել նաեւ այն օրենսդրական ակտի հիման վրա, որն ընդունվել, սակայն դեռեւս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			(բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ: Այս համատեքստում կարծում ենք, որ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելու վերաբերյալ բացառություն նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտած չլինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ համապատասխան կանոնակարգի ընդունման համար: Ըստ այդ առաջարկվում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերը: Միաժամանակ հիմք ընդունելով առաջարկվող կարգավորումը՝		

			առաջարկվում է Նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ մասի «6-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ մտնելուց» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակումից» բառերով		
20.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 3-րդ մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ մասում սահմանված հասկացությունը, ինչպես նաեւ նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկում ենք Նախագծի 26-րդ հոդվածի 3-րդ մասում «ենթաօրենսդրական ակտերն» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**
21.	**ՀՀ կառավարություն**	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ (լրամշակված 6-րդ կետ), 3-րդ հոդվածի 3-րդ մաս, 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետեր, 18-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծում առկա են մի շարք տեխնիկական վրիպակներ, հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է շտկել վրիպակները:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**